Զ. ՏԱՐԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 13 ՕԳՈՍՏՈՍ 1903 ԹԻՒ 542

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՐԱՏԱՊԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին ամիսի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլայայ։

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ և դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Բ.

Այո, հրէաները գիմացկուն ժողովուրդ են և երկար դիմացան իրենց հայրենիքից դուրս, օտար ցեղերի մէջ չնորհիւ իրենց կրօնքի ու ազգային աւանդութիւնների. սակայն այլեւս չեն կարող դիմանալ որովհետեւ վերը յիշած ազգայնութեան պահպանումի խախուտ յենարանները այսօր բոլորովին քայքայվում են։

Հրէան այսօր ոչ ազգային լեզու ունի և ոչ սովորութիւններ. հայրենիք արդէն չկար ու չկար, Ուրեմն այլեւս գոյութիւն չունեն այն ֆակտորները. որոնցով միայն նա կարող էր մի որոշ ընտանիք ներկայանալ մարդկային ցեղի մէջ։ Հրէան ձուլվելու վրա է, ինչպէս նա ձուլվեց հին Ասորեստանում, Բաբելոնում, Հայաստանում, Իսպանիայում, Իտալիայում, Արաբիայում. ու այսօր ձուլվում է ուրիշ երկիրներում։ Եւ այդ ձուլվելու վախն էր որ վերջին ժամանակներս մի քանի հարուստ բարեգործ հրէաներ որոշեցին զուտ հրէական գաղթականութիւններ հիմնել Ամերիկայում և նախկին Պաղեստինում։

Կարծեմ ամենքէն յայտնի է որ Ռուսաստանում, հին Լեհաստանում, Աւստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում հրէաների թիւը միլիոնների և հարիւր հազարներէ հասաւ. եւ դրանց ամենախոշոր մեծամասնութիւնը տնտեսական ամենավատ դրութեան մէջ էր գտնվում, միակ պատճառը ըստ. մարքսիստների ժողովրդների ըմբոստանալու համար. սակայն հրէան իբրեւ ժողովուրդ ոչ մի երկրում չըմբոստացաւ. եւ չէր կարող իբրեւ ժողովուրդ ըմբոստանալ, որովհետեւ նրան պակասում էին և ուրիշ պատճառներ, որոնք տնտեսական քայքայումի չափ զօրեղապէս ցնցում են ժողովրդներին և մղում դէպի կռիւ ճնշողների դէմ։ Հրէան մասնաւոր մաքառողներ ուեց ամեն կուսող ժողովրդի, որի հետ ապրում էր։ Բայց ինքը իբրեւ հրէա ժողովուրդ երբէք չըմբոստացաւ։ Եղան ռուսական, ֆրանսական, գերմանական, աւստրիական անհատ հրէա ապստամբներ, ըմբոստներ, տիրող կարգերի և տնտեսական անհաւասարութեան դէմ կուսողներ, բայց հրէա ժողովուրդը այդ գերում երեւան չեկաւ և այսուհետեւ բոլորովին չի գայ։

Արդեօք սրա գլխաւոր պատճառներից մէկը չէ՞ և հրէա ժողովրդի անհայրենիքութիւնը ու ինքնուրոյնաբար ապրելու, զարգանալու և յառաջադիմելու պակասութիւնը։

Եւ հրէան այսօր անհայրենիք է, կոսմոպոլիտ է ստիպված. նա ամեն տեղ աշխատում է փոխել տիրող կարգերը, աջակցել այն օտար տարրերին, որոնք մաքառում են իրենց հայրենիքը օժտել ազատամիտ օրէնքներով, որոնց չնորհիւ վերջապէս հաւասարվող, պարիա դարձած հրէան էլ կարող է մի քիչ ազատ շունչ քաշել։ Հրէան յոյս չունի բարեկարգ հայրենիք ստեղծելու և ձգտում է օտար երկիրը բարեկարգելու գործին զարկ տալ, որ ինքն էլ կարողանայ մի քիչ լաւ ապրել։

Ռուս կառավարութիւնը այդ զգաց և Քիշինէվում հրէաներին ջարդեց. նա վաղը մի ուրիշ տեղ էլ կը ջարդի։

Բայց հրէան կարող է այդ բիսկը անել, Ռուսաստանը կամ մի ուրիշ երկիր բարեկարգելու համար, որովհետեւ նա հայրենիք չունի. և իբրեւ առանձին ժողովուրդ ապրելու, յառաջադիմելու յոյսը, հաւատը չունի։

Հրէաները իրաւացի են որ մասնակցում են Ռուսաստանը բարեկարգելու և ցարիզմը տապալելու գործին. բայց մենք իրաւացի և օգտակար գործ կատարած կը լինե՞նք, եթէ մեր կովկասեան ուժերը վատնենք նոյն գործի համար։ Արդեօք մենք մեր առջեւ աւելի դիւրին, աւելի անմիջական, աւելի յաջողութիւն ունենալու յաւանականութիւն ունեցող գործ չունե՞նք։ Եթէ մենք Կովկասի հայութիւնը Ռուսաստանը բարեկարգելու զորձի համար ջնջումի վտանգին ենթարկենք, արդեօք պատճառ չե՞նք լինի և ջնջման մեր տաճկահայ եղբայրների, որոնց մեծ յոյսը մենք ենք կազմում և այդ յոյսը դեռ չենք արդարացրել։ Այս հարցերի մասին կը խօսենք յաջորդ թիւով։

ՎԱՐԴՕ

(Շարունակելի

ՎՐԷԺԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հայ յեղափոխական գործունէութեան տասնեւհինգ տարեայ շրջանում մի մասնաւոր ուղղութիւն որոշապէս պայծառ, հաստատուեց Դա հայ մատնիչ դաւաճանների դէմ ընդունված արժանի սիստէմն է, որը հայ յեղ- կազմակերպութիւնը պինդ կերպով կազապարել է իր մէջ եւ յեսեւոզակաութեամբ լ գործ է դընում։

Ցունվարի 4ին, Վանում մի ինչ որ հայ լրտես՝ Խաչիկ Սէմէրճեան, դառնալով նոցկայի գործիք թուրք կառավարութեան ձեռքում, յանդգնում է մատնել ու մատնանիշ անել Վարդգէսի բնակարանը։ Վարդգէսը նոյն գիշեր կալանաւորում է։ Մի ստրուկ ձեռք է մեկնում ազատութեան գինուորին, արտասահմանից եկած յեղափոխական գործչի կեանքին... եւ այդ դաւաճան հա՛յ... Դա պատմական խորը, անջնջելի արատ էր, խարանված հայ ազգի յեղափոխական ոգւոյն, նրա ազատական ձգտումներին, զգացումներին։ Սակայն անծայր ատելութեան զգացմունքը, ամօթի կսկիծն ու զայրոյթի եւ վրէժի անյօգ տենչը ահա տալիս են էլի՛ մի հայի ձեռքին պղպատեայ գործիքը։ Մատնութեան հետեւեալ օրը իսկոյն, յունվարի 5ին, Վանի գլխաւոր եւ բազմամարդ փողոցներից մէկում, ըմբոստ ձեռքը դաշոյնի տասնեւչորս հարուածներով վերջ է տալի դաւաճանի գոյութեան... Տասնեւչորս հարուած։ Հէնց դրանում է արտայայտում ապստամբական ոգին։ Վարդգէսի կորցրած ազատութեան եւ իր կրած ժանգոտ չղթաների համար մատուցված արժանի զոհն է դա—դաւաճանի արիւնոտ դիակը տասնեւչորս հարուածներով յօշոտված ու այլանդակ. փողոցի մէջտեղում արիւնաթաթախ։ Արժանի պատիժ, կենդանի բողոք, նուիրական ու սուրբ գործ։

Ցունվարի 6ին, Ծնունդի առաւօտ, հեռագիրը կայծակի սլացքով աւետեց արար-աշխարհին Օրմանեանի գնդակահարման լուրը։ Հայ ազգի մեծ դաւաճանը, որ իր բոլոր ընդունակութիւններն ու «կարողութիւնները» գործ էր ածում ի վնաս ժողովրդին, այդ օրը իր արդար հատուցումն էր ստանում ժողովրդի մի զաւակից եւ այն էլ չիկացած գնդակով։ Հայ ժողովուրդը վաղուց չէր տօնել այդպիսի ծնունդ, Նրա տօնն ու Զատիկը վաղուց էր սեւացել։ Եւ Օրմանեան փաշան քանի-քանի անգամներ սրբապղծել էր Մայր-ժողովրդի պատիւն ու կռիւը, կրօնքն ու եկեղեցին։ Սակայն այդ օրը, երբ նա Գում-Գապուի հայոց Մայր եկեղեցում ջերմեռանդ «հաւատացեալների» ծովածաւալ բազմութեան առաջ էլի ձեռք է բարձրացնում հայի դարերով պաշտած Աստծուն եւ Մեծ-Մարդասպանի համար կեանք եւ արեւշատութիւն խնդրում, անարեկչի արձակած գնդակից խեղդում է մաղթանքի ձայնը ճարպոտ Օրմանեանի անիծված որկորում, նա վայր է գլորվում թուլացած բազուկներով։ Եւ սրբագործում է հայի ե՛ւ կռիւը, ե՛ւ պատիւը, ե՛ւ նրա պաշտած Սեղանը... Դա պատմական փաստ է, հիանալի ապացոյց, որ հայ ժողովուրդն էլ ծնում է իր արքանդից զաւակներ, հերոսներ, որոնք ոչ միայն չեն խնայում իրանց մատնիչ եղբօրը օրհասական կուռում, այլ եւ Կարմիր-Գազանի հէնց քթի տակ, նրա արիւնոտ գահի ներքեւ եւ հայի պաշտած տաճարում հպարտ ու անխռով գնդակ են ուղարկում իրանց դաւաճան պատրիարքին։

Ռոմանական «Ունիվէրսուլ» օրաթերթերը ամսոյս չորսից մի հեռագիր է տպում ռոմանական կալաֆաթ գիւղաքաղաքից, որով յայտնում է թէ Կարապետ Մարտիրոսեան անուն հայը նախորդ օրը սպանվել է այնտեղ էլի մի հայից ձեռքից, որը եւ անյայտացել է։ Նոյն թերթը իր յաջորդ համարում տալիս է աւելի երկար ծանօթութիւններ սպանութեան հանգամանքների մասին։ Այնտեղ նկա-

րագրում է թէ ինչպէս գտնվել է Կարապետի դիակը, միգը կարւած, անթիւ հարւածներից բոլորովին այլանդակւած դիակի աղտոտ սարսափելի տպաւորութիւնը, սենեակի յատակում լճացած արիւնը թէ ինչ պէս անխնայ է մնացել նրա կահ կարասիքը, նոյն իսկ գրպանում ունեցած փողին ձեռք չէ մեկնւած եւայլն։ Արտասահմանի եթէ ոչ ամբողջ, գոնէ հայութեան մեծ մասին ծանօթ է Պ. քաղաքում տեղի ունեցած 28 սնդուկի խաչագողութեան այնքան աղմկալի հարցը։ Այժմ սպանւող Կարապետ Մարտիրոսեանը այդ խաչագողութեան գըլխաւոր յանցագործն է, որ յեղ. կազմակերպութեան կողմից իրան յանձնւած զէնքերը գաղտնի կերպով ծախել է։ Ռոմանական նոյն լրատու թերթը աւելացնում է, թէ ոճիրը գործւել է անյայտ վրէժի նպատակով եւ մի «ընկերակցութեան» կողմից։ Հարցը պարզւում է, որ նա սպանվել է իր դաւաճանական արարքի մասին հայ յեղ. կազմակերպութիւնից։ Խաչագողութիւնից յետոյ նա կամեցել է մի կերպ իր բնակութեան հետքը անյայտ թողնել. Սակայն որպէս երեւում է, նրան հետեւել են նոյն եռանդով, ինչպէս ինքն է աշխատել խոյս տալ վտանգից։ Կալաֆատը ռոմանական մի փոքր գիւղաքաղաք է, Դանուբի ափում, բուլգարական Վիտին քաղաքի դիմաց։ Այդ փոքրիկ գիւղաքաղաքում բնակութիւն հաստատել են միայն երեք հայեր, որոնց չորրորդը եղել է Կարապետը. Չը նայած սրան ու զինւորական եւ ոստիկանական խիստ հսկողութեան տէրորը գործել են ամենայն սառնութեամբ ու անյայտացել։ Այս տեղ արժէ յիշել, թէ Կ. Մարտիրոսեան մատնիչ չէ եղել, այլ հայ յեղափոխութեան զէնքերն է ծախել եւ դրա համար այնչափ ծանր է տուժել։ Դա պարզ իրողութիւնն է։ Ահա թէ ինչ է ընչանակում մի գերի ժողովրդի արիւն արցունքով ձեռք բերւած եւ նրա ազատութեան վեհ գործին յատկացված գոյքերը—այն էլ զէ՛նք—իւրացնել ու չահատակութեան իբրեւ միջոց գործ ածել, եւ դրան ինչ արժէ անել—Մենք կը բացատրենք յաջորդ յօդւածով։

Էմիլ Շղարշեանց

Գերմ. 6 Օգոստ. 1903

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Օգոստոս 7 թուականաւ Կ. Պոլսէն կը գրեն «Էնֆօռմասիօն» թերթին.

„Մեր գուշակութիւնները կիրականան. Քիւրտերը Հայաստանի մէջ իրենց գործերը սկսած են—աւերել, քանդել, բռնաբարել և ամբողջ գիւղեր կրակի տալ.

Հայերու և Թուրքերու մէջ արդէն տեղի ունեցած են մի քանի ընդհարումներ „Մուշի և Էրզրումի" մօտերը. Հայ հայդուկներու խումբ մը Խնուս զարնուեցաւ թուրք գունդերու հետ, որոնց յետոյ օգնութեան հասան Քիւրտերը. Եօթը զինւորներ ըսպաննուեցան, շատեր վիրաւորեցան. Հայդուկային խումբը աներեւոյթացաւ.

Ազգաբնակութիւնը վախցնելու և ծրագրած կոտորածները դիւրութեամբ յաջողցնելու համար թիւրք կառավարութիւնը եռանդով կը հալածէ դժգոհ տարրերը. Նշանաւոր հայ յեղափոխական Քեռի, որ տարիներէ ի վեր կը ջանար Տէրսիմի Քիւրտերը Սուլթանի դէմ ապստամբեցնել. Նորերս Երզըայի մէջ կախուեցաւ. Խռովութիւնները միշտ ընդարձակ ծաւալ կըստանան. Մուշի հայ ազգաբնակութիւնը ընդհանուր կոտորածէ մ' վախնալով Ռուսական սահմանը կը փախչի Կովկասի մէջ ապաստան մը գտնելու. Ռուս պաշտօնեաներ սակայն կարգիլեն իրենց սահմանը անցնիլ. Միւս կողմէն թուրք զինւորները ջարդ կըսպառնան. Դրութիւնը շատ լուրջ է և մեծ աղէտներ պիտի պատահին եթէ պետութիւնները չմիջամտեն."

Ժամանակները փոխուեր են, դարերու ստրուկ Հայը այժմ դարձեր է ապստամբ և դուրս կուգայ յանդուգն կռուի և կռուի մէջ նա կը հանդիսանայ անպարտելի. Մեր ըսածին ապացոյց Եւրոպական թերթերու վերջերս հաղորդած լուրերը և Վիէննական թերթի վերի տեղեկութիւնները.

Գործ կայ. սա փաստ է, որ կը կատարուի մեր աչքի առջև. Հայրենիքի ազատութեան գործով ոգևորուելու և անոր նուիրուելու համար աւելի մեծ նշաններ պահանջել կը լինէր տխմարութիւն և դաւաճանութիւն ընդհանուր գործի դէմ.

Ուստի մենք պէտք է այժ տանք այդ փրկարար գործին, այժ տանք նիւթական ընդարձակ միջոցներով, որ կռուող Ֆէտայիներու մօտ չպակսի զէնք, ռազմամթերք և պաշար, այժ տալ բարոյապէս, զրկելով գործի ասպարէզ բանիմաց պրօպագանդիստներ և կարող կազմակերպողներ.

Մակեդոնիան մեզ օրինակ և քաջալեր.

Մարզպետունի

Զուիցերիա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուսճուք, 5 Օգոստոս 1903

Այս վերջի երկու տարիներուն մէջ ազգ. երկսեռ վարժարաններու ընթացքը, բաղդատմամբ նախորդ տարիներուն հետ, բաւական յաջող եւ արդիւնաւէտ էր. Շնորհիւ հոգաբարձութեան արդասաւոր ջանքերուն եւ ուսուցչական քիչ շատ ատակ մարմնի մը՝ կրթական գործը բարեկարգ վիճակի մը մէջ էր. Ժողովուրդը գոհ էր այդ վիճակէն եւ ի հարկին չի զլացաւ իր նիւթական ու բարոյական քաջալերանքը. Ասիկայ ապացոյց մըն է, թէ մեր ժողովուրդը գոնէ որոշ աստիճան մը սկսած է զգալ մտաւոր զարգացման ու կրթութեան անհրաժեշտութիւնը եւ տրամադիր է սատարել ու վարձատրել ամեն անկեղծ աշխատանք, ձեռնարկ ու զոհաբերութիւն, որ կըլլայ մեր ազգ. վարժարաններու աննախանձելի դրութեան փոքրիկ օգտակարութիւն մը մատուցանելու, ապագայ հայ սերունդին մտաւոր կարողութիւններուն զարկ տալու համար. Աշխատանքը միշտ կը վարձատրուի, ապարդիւն չի մնար, մանաւանդ երբ որոշ ջանքեր կը թափուին հանրային հաստատութեան մը բարեկաւումին համար, բոլորովին արդար զգացումով մը, աչքի առջ ունենալով միայն հանրութեան եւ հաստատութեանը շահերը.

Մենք կը կարծէինք որ տեղւոյս ազգ. վարժարաններու հոգաբարձութիւնը իր երկու տարուայ պաշտօնավարութեան մէջ աշխատած է բոլորովին անաչառ կերպով, զուրկ ամէն տեսակ չահասիրական ու անձնական դիտումներէ, նկատի ունենալով լոկ կրթական գործի կենսական պահանջները եւ աշխատելով գոհացնել ատոնք. Սակայն վերջերս հոգաբարձութիւնը իր մէկ անմիտ տընօրէնութեամբ հիմովին խախտեց ժողովրդային կարծիքը, խորապէս յեղաշրջեց հանրային միտքը. Պ. Ապազանը, որ երկու տարի չորունակ պաշտօնավարած է ազգ. երկսեռ վարժարաններուն մէջ իբրեւ աւագ ուսուցիչ՝ ստիպուած է հրաժարիլ, տեղի տալով ուսուցչութեան բոլոր յարմարութենէն զուրկ մարդու մը. Զինքը հրաժարեցնելու չափ զգալի մաս մը զեղչելով իր ամսականէն, հոգաբարձութիւնը այդ զեղչը բարդած է տիրացու-վարժապետ Պ. Գալուստի ամսաթոշակին—եւ մաս մըն ալ աւելի—որովհետեւ այս վերջինը այլեւս պիտի հրաժարի իր երանելի տիրացութենէն՝ նուիրելով իր կարողութիւններուն եւ ընդունակութիւններուն բովանդակ չգոյութիւնը հայ մանկաւոյն մտային եւ բարոյական զարգացման... Իրողութիւնը չափազանց պարզ է. Պ. Ապազանը վըկայականով եւ տասնեակ տարիներու փորձառութեամբ—Կ. Պոլիս (Ղալաթիոյ Կեդրոնականին) եւ Պուլկարիոյ ազգ. վարժարաններուն մէջ—վերջապէս միջնակարգ ուսման տէր ուսուցիչ մըն է, իսկ Պ. Գալո՞ւստը...—Նոյն իսկ [illegible] զուրկ մարդ մը, կատարեալ Տէր Թօթիկ մը. Եւ դեռ փոխանակ դուրս վտարելու զայն, առաջնութիւն մըն ալ կուտան իրեն երկու տարուան աւագ ուսուցչի (ներկայ հոգաբարձութենէ տուած այդ տիտղոսը) մը քով. Ինչո՞ւ այս տարօրինակութիւնը. Ժողովրդի մէջ շատ մը չարժանիթը պատճառներ տարածուած են՝ կէս հաւանական, բայց եւ այնպէս ամէնքն ալ կզուելի են ու անպատիւ եւ այժմ այստեղ զանոնք յիշելը մեզի համար հաճելի չէ. Բացայայտ, աչք ծակող ճշմարտութիւն մըն է որ հոգաբարձութիւնը նոյնպէս անհիմն եւ զպրոցի շահերէն հեռու նկատումներով է որ այդ քայլը կառնէ. Անկեղծ չահատակութիւն մը, անձնական գծուծ հաշիւ մըն է որ մեր ազգային ամենանուիրական յարկին տակ եւ ի վնաս անոր կը մաքրուի. Միայն երկու փաստեր կարծենք բաւական պիտի ըլլան մեր ըսածները ապացուցանելու. Պ. Ապազանի դասաւանդութեան ժամերը պակսեցնելով չնչին ամսաթօշակ մը կառաջարկեն, որը ոչ միայն անարժան եւ անընդունելի՝ այլ եւ ուսուցչի մը անհատական արժանաւորութիւնը արատաւորելու լկիրչ դիտումովը վրդովիչ եւ ըմբոստեցուցիչ է. Ասիկա պատճառ չէ՝ այլ խեղկատակ մեքենայութիւն մը. Պէտք է գիտնալ որ միայն ֆիզիքական աշխատանքի վարձատրութիւնը ժամերու քանակէն կրնայ կախում ունենալ, իսկ մտայինինը, ինչպէս է ներկայ պարագայիս մէջ՝ ուսուցչին իր անձնական մտային, զարգացման պաշարէն ու կարողութենէն. Եթէ ուսուցչական խմբի անչուք թիւէն դասատու մը պակսեցնել հարկաւոր է, նկատի առնելու է թէ ո՞րն է աւելի անկարող, որը նուազ օգտակարութիւն կրնայ մատուցանել վարժարանին եւ ոչ թէ շլանալ ու աղօտիլ զանազան քծնումներէ եւ կեղծաւորութիւններէ. Պ. Գալուստը հոգաբարձու, թաղական եւ կամ ուրիշ աչքի մը հետ խօսած միջոցին՝ այս վերջինը ըլլայ ոտքի վրայ կամ նստած՝ փայտի պէս ուղղուած, ձեռքերն ալ փորին վրայ, այսինքն բարեւ բռնած կը կենայ).

Մենք վարժարաններուն բացորոշ վնաս մը կը նկատենք այստեղ. Թող կրթական յարկերուն մէջ գոնէ չի մտնեն կրկին անձնական, կուսակցական միտումներ ու զանազան անհամաձայնութիւններու եւ հակառակութիւններու տեղի տալով չի վընասուին, ոտնակոխ չըլլան վարժարաններու շահերը. Թող ամէն հայ հետամուտ ըլլայ ազգային այս նուիրական հաստատութիւններուն շուրջը տեղի ունեցող երեւոյթներուն եւ իր բազմազան պարտականութիւնները կատարել չի զլանայ ի հարկին.

Լսեցինք որ երիտասարդական խումբ մը արդէն բացատրութիւն պահանջեր է հոգաբարձ. մարմինէն. Հետեւանքը գրեթէ ապարդիւն է եղեր եւ ուշադրութեան անգամ չէ արժանացեր, որովհետեւ նոյնիսկ ամենափոքրիկ փոփոխութեան չէ ենթարկուեր հոգաբարձու անօրինութիւնը. Սակայն կատարուած անիրաւութիւնը բաւական յուզած է մտքերը եւ կարծէ լուրջ ուշադրութիւն դարձնել խնդրին. Սխալը կրկնակի կը ծանրանայ, երբ հասարակութեան ո եւ է մասին ոլոչակի՝ եւ անվերապահ դիտողութիւնները ուշադրութեան չեն առնուիր մարմնի մը կողմէն, որ ինքնայօժար կերպով կոչուած է ազգային հաստատութեան մը հողատարութիւնը ստանձնել. Քանի դեռ վերքը փոքր է, ապեղանի դրէք, դարմանեցէք.

Երկու վարժարաններու համար ալ (արակ. եւ իգական(Թող կանխաւ խղճի մտօք, վարժարաններու կենսականութեան եւ պահանջներուն վրայ հիմնուելով հոգաբարձութիւնը կազմէ յարմարագոյն եւ կարող ուսուցչական խումբ մը եւ թող ժողովուրդն ալ ջանայ գիտակցաբար պահել իր վարժարանները պէտք եղած բարձրութեան վրայ եւ չի թողուլ որ անձնական հաշիւներու մէջ դառնան անոնք.

∴

Մանկապարտէզի ցաւալի եւ անորոշ դրութիւնը դեռ կը շարունակուի: Արդեօք կարելի չէ՞ երիտասարդական անջատ խնամակալութիւն մը կազմել եւ թարմ ուժերով նոր եւ ուժեղ հունք մը տալ մանկապար-

տէջին ։ Երիտասարդական առաջին անգործ բանակ մը կայ։ Միջոցներն ու պայմանները թեթեւ են, բաւական է որ աշխատելու տրամադիրները մէջտեղ ելնեն ։

Սուրէն

Պուքարէշտ 8 օգոստոս 1903

Հաճեցէք տպել ձեր պատուական թերթին մէջ հետեւեալ նամակը, որն տեղւոյս Րումաներէն թերթերը տպեցին այսօր։ Յիշեալ նամակը ղրկուած է Մակեդոնիայի Թէքիովա քաղաքէն՝ պուլկար երիտասարդէ մը, որը թեպէտ Րումանիա ծնած, զինուոր եղած, բայց վերջէն, շնորհիւ պուլկար. կոմիտէի անդամներու՝ լաւ համոզուած և գաղափարուած, յարմար առիթ մը գտնելով և առնելով իր կեցած վաճառականական տնէն 150 ֆր. մեկնած է դէպի իր հայրենի երկիրը — Մակեդոնիա — ու սոյն նամակը գրած է իր մօրը։

Թէքիովա 1 օգոստոս 1903

Հայրենիքս-Մակեդոնիա-զիս կանչեց

Սիրելի մայրիկս

Ամէնէն առաջ կուզեմ որ սոյն փոքրիկ գրութիւնս ձեզ ողջ և առողջ գտնայ։ Չեմ ըսեր որ երջանիկ էք իմ պատճառաւս, որ ձեզ բերի այսպիսի մի դժբաղդութիւն, բայց մի յուսահատիք։ Ինչ որ առի այն վաճառատունէն, այն 150 ֆրն. մի շաբաթ վերջը պիտի ղրկեմ ձեզ որ յանձնէք իր տիրոջը։

Այս տեսակ մի քայլ առնելուս պատճառը դրամ չունենալս էր, որ երթայի հոն ուր կը կանչէր ինք՝ հայրենիքը, որն ազատեմ գերութենէ և դժբաղդութենէ,

Եթէ ինձ համար ալ կուզէք իմանալ, Մակեդ. կոմիտէի մէջ վոյեվոտա մըն եմ քառասուն հայդուքների վրան, և այսօր մեկնեցայ անոնց հետ, իմ հրամանի տակ, Թէքիովա ուր հաւաքուած են թուրք զինուորները, մերինները ամէնքն ալ լաւ զինուած են ոտից մինչեւ գլուխ, և կսպասեմ երջանիկ ժամը որ զինուորներու հետ պատերազմի բռնուինք։

Մայրիկ, գիտեմ կարօտնաք, այլ հակառակը, եթէ մեռնիմ իմ և նահատակ ընկերներուս հոգւոյն եկեղեցիայ ողորմութիւն տուէք, և աղօթքներ բարձրացուցէք դէպի երկինք. և կրկին հիմայ ալ աղօթեցէք որ ողջ վերադառնամ յաղթանակի դրօշակը ձեռքս ձեր գիրկը. բայց ո՞վ գիտէ պիտի ազատիմ թէ ո՞չ. Մի քանի օրէն ձեզ պիտի ղրկեմ իմ պատկերս հայդուկային զգեստով որ ունենաք յիշատակ մը իմ կողմանէ, ո՞վ գիտէ անգամ մը եւս մարմնաւոր աչօք, կամ թէ հոգիս պիտի ճամբորդէ ձեզ մօտ։ Հոս շատ խառնակութիւն կայ, պուլկար սահմանագլուխը պուլկար սպայ մը մեռցուցին, անցեալ կիրակի թուրքերու կողմանէ Պիթոլիայի Ռուս հիւպատոսը զարկին, ուրեմն կռիւը միշտ կայ և մենք ալ միշտ պատրաստ։

Ժամանակ չունիմ որ աւելի երկարօրէն գրեմ, բայց այս նամակը պահեցէք իբր իմ վերջին յիշատակը, գուցէ ըլլի վերջին նամակս իմ ամբողջ կենացս, առոր համար կաղաչեմ լաւ պահեցէք։ Ընդունեցէք համբոյրներս......

Ցտեսութի՜ւն, միայն աղօթեցէք ինձ համար։ Իմ հասցէս չեմ կարող տալու, որովհետեւ չեմ գիտեր թէ գտած տեղս բօստա կայ թէ ո՞չ։

Միլան. Վոյվոտա

Ց. Գ.

«Աղօթեցէք ինձ համար, կամ իմ հոգւոյս համար»։

Այս է այն նամակը զոր գրած է հայդուկ Միլանը և ղրկած իր ծնողացը։

Հիմակուհիմայ Ռումէն կառավարութիւնը թէև լսած է Քալաֆաթ քաղաքի տնօրէնը, բայց չէ կարող ոեւէ գոյն մը տալու. կը կասկածի թէ դիակը թիւրքի կողմանէ մատնիչ մըն է եղեր և Պուլկ. կոմիտէն մաքրեր է, երանի թէ միշտ այս տեսակ հաւատային, տեղւոյս թերթերը միշտ կը գրեն ոճիրի մասին։

Համլեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Թաղական խորհուրդս կը փութայ ներկայիւս հրաւէր կարդալ արգոյ ազգայնոց որ բարեհաճին իրենց աջակցութիւնն չզլանալ քաղաքիս նորոգ կազմակերպեալ Աղքատախնամ ընկերութեան պատուարժան Գործադիր Ժողովոյ Մեծ. Անդամոց, որոց անձնուէր ջանից շնորհիւ ընկերութիւնը կրցած է քիչ ժամանակուան մէջ այնքան օգտակար լինել քաղաքիս բազմաթիւ հիւանդ և անտէրունջ աղքատաց։

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ

Ատենադպիր — Ատենապետ

Գաբրել՛եան — Ց. Մ. Թովմասեան

(ԿՆԻՔ)

Վառնա 12 Օգոստոս 1903

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն)

«Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների կառավարութեան հարցի հետ միասին վաղուց կապված է և այն հինգ ընդարձակ գիւղերի (Վաղարշապատ, Մաստարա, Օշական, և Եղուարդ) ազգայնակութեան կենցաղը կարգաւորելու հարցը, որոնք պատկանում են Էջմիածնայ վանքին։ Այդ գիւղերի կառավարութիւնը իր բնորոշագծերով մի զարմանալի երեւոյթ է մեր օրերում և կատարելապէս անհամապատասխան եկեղեցու նշանակութեան ու կոչմանը։ Այդ կառավարութեան արտօնութիւնները հիմնված են այսպէս անուանված թիուլի իրաւունքի սկզբունքների վրա, որ նման է ճորտատիրական իրաւունքին։ Էջմիածնի վանքը մինչև հիմա առնում է հարկեր և տուրքեր յիշված գիւղերի բնակիչներից, որոնք, բացի դրանից, պարտաւոր են աշխատանքի որոշ օրեր նուիրել Էջմիածնի օգտին։

Այս բոլորն ի նկատ առնելով, հարկ է ասել, որ այս տարվայ յունիսի 12 ի օրէնքով հրահանգված փոփոխութիւնը հայ-եկեղեցու կալուածների կառավարութեան եղանակի վերաբերմամբ աւելի քան ցանկալի է։ Օրէնքը, նպատակ ունենալով բարւոքել եկեղեցու կալուածների կառավարութեան եղանակը յայտնապէս բխում է այն մտական հովանաւորութենից, որ այդ եկեղեցին անընդհատ վայելել է մեզանում։ Ինչպէս երեւում է այդ օրէնքից, կառավարութիւնը, կարենալով հասնել վերոյիշեալ նպատակին, կանգ է առել հովանաւորութեան բնաւորութիւն ունեցող միջոցների վրա, որք, ինչպէս մենք գիտենք, մեծ աջողութեամբ գործադրվեցին Բեսարաբիայում, արտասահմանեան յունադաւան եկեղեցու կալուածներում։

Մինիստրների Կոմիտէի՝ յունիսի 12-ին Բարձրագոյն հաստատուած պօլօժէնիայի զօրութեամբ՝ հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների կառավարութիւնը կը կենտրոնացնվի այսուհետեւ կառավարչական հիմնարկութիւնների — երկրագործական և պետական կալուածների, ինչպէս նաև Ներքին գործերի մինիստրութիւնների մէջ։ Հողային բոլոր կալուածները կառավարւում է երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը, որը, սակայն, անձեռնմխելի է թողում այն հողաբաժինները, որոնց վրա կառուցված են եկեղեցիներ, վանքեր և հոգևոր այլ հաստատութիւններ, նոյնպէս և այն հողաբաժինները, որոնք մանրամասնաբար յիշատակված են նոր օրէնքի մէջ։ Անշարժ կայքերից ստացված եկամուտների անտեսութիւնը կենտրոնացնվում է Ներքին գործերի մինիստրութեան մէջ, որին և յանձնվում են այդ եկամուտները երկրագործութեան մինիստրութեան կողմից։ Նոյն Ներքին գործերի մինիստրութեան վրա էլ դրվում է հայ-եկեղեցու բոլոր դրամագլուխների տնտեսութեան պարտաւորութիւնը, իսկ մինիստրութիւնը իր կողմից թէ անշարժ կայքերից ստացված եկամուտները և թէ իր տնտեսութեան տակ առնված դրամագլուխներից կազմված տոկոսները տալիս է այն հոգևոր հաստատութիւններին, որոնցից այդ գոյքերը և դրամագլուխները ընդունված են։

Այս բոլոր նախագծումների իրագործման ժամանակ, հայ-լուսաւորչական եկեղեցու իրաւունքները ամենևին չեն խախտվում. Նա ըստ առաջնոյն մնում է իր բոլոր անշարժ կայքերի և դրամագլուխների սեփականատէրը։ Կառավարչական հիմնարկութիւնների վրա ընկնում է միայն այդ գոյքերը իրօք կառավարելու պարտաւորութիւնը։ Հայոց եկեղեցին այսպիսով չը կրելով ոչ մի վնաս իր կալուածական դրութեան կողմից, ազատւում է միայն եկեղեցական հիմնարկութիւններին անհամապատասխան գործից և ստանում է ամուր և բարեկարգ անտեսութիւն իր կալուածներում։ Եւ մենք հաւատացած ենք, որ Մինիստրների Կոմիտէի Բարձրագոյն հաստատված պօլօժէնիայի բոլոր նախագծումների գործադրութիւնը կը հանէ այդ եկեղեցու տնտեսութիւնը այն անբնական դրութիւնից, որի մէջ այժմ գտնվում է նա։

Գոյքերի կառավարութեան այս իսկ եղանակի երեւնամեայ գործադրութեան փորձը Բեսարաբիայում, արտասահմանեան յունադաւան վանքերի կալուածներում, ապացուցեց նրա պիտանութիւնն և կատարեալ աջողութիւնը։ Պետական կալուածների մինիստրութիւնը, ընդունելով իր տեսչութեան տակ այդ վանքերի կատարելապէս բարձիթողի արած կալուածները, շուտով հասցրեց նրանց ծաղկած դրութեան և նրանց եկամուտները շատացրեց աւելի քան կրկնապատիկը։ Այս փորձը հիմք է տալիս յուսալու, որ երկրագործութեան մինիստրութիւնը, իր տեսչութեան տակ առնելով այժմ հայոց եկեղեցու կալուածները, նոյնպիսի արդիւնաւէտ հետեւանքների կը հասնի և այս կալուածներում, որոնց եկամուտների աւելցումը անկասկած մի դրական կը լինի հայ եկեղեցու բարեկեցութեան, զարգացման և սրանով, հաւանականէ, հնարաւորութիւն կը ստացվի ոչ միայն հարկ եղած չափով ապահովելու եկեղեցիների, վանքերի և այլ հոգևոր հաստատութիւնների գոյութիւնը, այլ և այնուհետեւ նիւթական լաւագոյն պայմանների մէջ դնելու և հայ եկեղեցու հոգևորականութիւնը։ Եթէ կղերի անդամներից ոմանք, որոնք իրանց իրաւասութեան տակ ունեն զանազան եկամուտ բերող կալուածներ, բաւականաչափ ապահոված են, նոյն ժամանակ միւսները, մանաւանդ շատերը գիւղական հոգևորականութիւնից, նիւթական մեծ նեղութիւն են կրում։

Այս իսկ պատճառով էլ նախագծվում է առանձին օժանդակ դրամագլխի կազմութիւն՝ եկեղեցական կալուածների եկամուտներից 5 0/0 յետ գցելու միջոցով։ Այս միջոցի օգտակարութիւնը ապացուցվում է հռոմէական-կաթոլիկ եկեղեցու օժանդակ դրամագլխի կազմութեան պատմութեամբ, որ հնարաւորութիւն է տալիս կառավարութեան բոլորովին բաւարար հասոյթով ապահովել ոչ միայն բարձր, այլ և ստորին, ծխական հոգևորականութիւնը։ Սրա նման և հայոց եկեղեցու օժանդակ դրամագլուխը մի ամուր հիմք կը լինի լաւագոյն և համաչափ կերպով ապահովելու այդ եկեղեցու ամբողջ հոգևորականութիւնը, չը խօսելով արդէն այն մասին, որ հայոց եկեղեցու կալուածները կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ անցնելու հետ միասին կոչնչանայ և հինգ գիւղերի կախումը հոգևոր վարչութիւնից, կախում, որ այժմ մի անախրոնիզմ է։

«Կովկաս» թերթէն թարգմ.

«Մշակ»

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռուս կառավարութեան հայ եկեղեցիների կալուածները յափշտակելու հանդէպ ինչպէս երևում է արտասահմանում ապրող հայութիւնը անտարբեր չի ուզում մնալ ։ Վառնացի մի խումբ երիտասարդներ մտածում էին մի բանի ձեռնարկել, բայց դեռ որոշ եզրակացութեան չէին յանգած, անցեալ օր Ռուսչուքից մի քանի պարոններ միացած, նամակներ էին ուղղել տեղիս երկու թերթերի խմբագրութիւններին և խնդրում էին, այս անգամ էլ, ազգային աղէտի առջև միանալ և մի գործի ձեռնարկել. իսկ երէկ երեկոյ, երբ թերթի երեք երեսները արդէն կազմված էին, խմբագրութիւնս Եւրոպական մի քաղաքում գտնված ուսանողուհիների, ուսանողների և երիտասարդներիի ստորագրութեամբ մի կոչ ընդունեց ։ կոչը ուղղված է ընդհանուր հայութեան. ստորագրողները խնդրում են հրատարակել և գործնական կերպով աշխատել իրականացնել այդ կոչի մէջ եղած առաջարկը ։ Միւս անգամ մենք կը հրատարակենք այդ կոչը, յուսալով որ ինչպէս միշտ, այս անգամ էլ Բուլգարիայի հայ գաղութը բողոքի առաջին արձագանքողը կը լինի ։

—Բաթումի մէջ սպաններ են Աղէքսանդր Թարխանեան, «Թատրոն» հանդէսի խմբագիրը, որ կառավարիչ էր գազի վաճառատան մը ։ Այդ պարոնի տիրոջմէն նախապէս ստակ ուզեր են ։ Վերջը, տիրոջը բացակայութեան միջոցին, փոքրիկ տղայ մը կրկին նամակ մը կը բերէ և կը յանձնէ Թարխանեանին ։ Թարխանեան անմիջապէս տղան ոստիկանութեան կը յանձնէ ։ Երկրորդ թէ երրորդ օրը զինքը կսպաննեն ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ զանազան քաղաքներու մէջ միթինքներ տեղի կունենան ի նպաստ Մակեդոնիոյ ։ Միթինքներուն կը մասնակցին բոլոր կուսակցութեանց պատկանողները ։

—Աչքի առջև ունենալով որ փաստաբանները շատ անգամ իրենց յաճախորդներու վստահութիւնը ի չարը գործ կը դնեն, արդարադատութեան նախարարութիւնը որոշեր է փաստաբաններուն վերաբերեալ օրէնքը փոխել, այդ զեղծումներուն առջևը առնելու համար ։

——

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Բոսֆորի քովերը հասած Ռուսական նաւատորմիղը հրաման ստացեր է ետ դառնալ, որովհետև Թուրք կառավարութիւնը շտապեր է Պոլսոյ ռուս դեսպանին յայտարարել, թէ Բ. Դուռը պատրաստ է Ռուսիոյ բոլոր պահանջները կատարել ։

—Բ. Դուռը հեռագրով քանի մը չէզոք պետութիւններէ սպաներ ուզեր է, Մակեդոնիոյ ժանտարմաներուն պետեր նշանակելու համար ։

—Անցեալ ամբողջ օրը և գիշերը Եըլտըզի մէջ նախարարական արտակարգ նիստ տեղի ունեցեր է ։

—Հիլմի փաշային տեղեկագրէն կերևի որ ապստամբութիւնը հետզհետէ զօրանալու վրայ է. գիւղերուն մէջ երիտասարդ պուլկար չէ մնացեր, ամէնքն ալ ապստամբներուն միացեր են ։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Օգոստոս 6ին երեկոյեան, Լօզէնկրատի դաշտերը յանկարծակի կը բոցավառուին ու Ստրանջա լեռը բոցերու մէջ կընկղմի ։ Պուլկարները տեսնելով որ ահուսարսափէն փախած գիւղացիներուն անտէր թողուցած հասուն հունձքերը Թուրքերը պիտի քաղեն, կորոշեն արտերը այրել, որպէսզի թշնամին անկէ չօգտուի ։ Հունձքերը այրելէն վերջը ապստամբները կերթան գիւղ մը, որ կը գտնուի Էտիրնէի և Պոլսոյ մէջտեղը, տինամիթով օդը կը հանեն կառավարութեան շէնքը, կանցնին Ախտոբոլ, կըայրեն հեռագրատունը ։ Բոցերուն երևնալուն հետ մէկտեղ Ստրանջա լեռան չորս կողմերէն կսկսին հրացաններ պայթիլ ։ Թուրք գիւղացիները սարսափահար կսկսին ամէն կողմերէն Լօզէնկրատ թափիլ ։

—Էտիրնէէն օգոստոս 9ին կը հաղորդեն. —քաղաքին մէջ սարսափ կը տիրէ ։ պուլկարները չեն համարձակիր փողոց ելլալ ։ Համարձակողները կը ծեծուին զինուորներէն և ոստիկաններէն ։ Մեծ քանակութեամբ պուլկարներ կը ձերբակալուին ։ բանտերը լեցուած են ։ Հիմա պետական ուրիշ հիմնարկութիւններ և մասնաւոր տներ բանտերու վերածուած են ։ Ռուս և միւս հիւպատոսները եռանդուն կերպով միջամտած են սարսափներուն վերջ տալու համար ։ Արիֆ փաշան կը յայտարարէ որ ինք չի կրնար ապահովութիւնը երաշխաւորել, որովհետև Թուրք ամբոխը սարսափելի կերպով գրգռուած է ։ Կացութիւնը սպառնական է. ապստամբները կռիւ կը մղեն վճռողական կերպով ։

Օգոստոս 6 ին Գրուշովօէն գրուած մասնաւոր նամակէ մը հետևեալը կիմացուի ։

Ապստամբները չը կրցին դիմանալ 12,000 հոգիէ բաղկացած Թուրք զօրքերուն և նահանջեցին ։ Անոնց քաշուելէն անմիջապէս ետքը Թուրքերը մտան քաղաք, ու սկսան հանդիպած պուլկարը սպաննել, տուները թալնել և ապա հրդեհեցին քաղաքը ։

Այրուած են 550 տուներ և խանութներ Ս. Նիկոլա եկեղեցին և քաղաքին կեդրոնը հողին հաւասարցուցեր են ։ Բազմաթիւ օրիորդներ, հարսեր բռնաբարուած և գերի տարուած են ։ Ողջ մնացածները գրեթէ մերկ, անտառները փախած են և անօթութենէ կը մեռնին ։ Քաղաքի մէջ ինկած դիակները շուներէն կը յօշոտուին ։ Տուներուն մէջ շատ մարդիկ այրուած են, շատեր ալ խեղդուած են ։

—Սոֆիայի մէջ լուր ստացուած է որ Մանաստիրի նահանգին մէջ Պուլկարներու ընդհանուր կոտորած տեղի ունեցեր է. բոլոր գիւղերը աւերուած և բնակիչները կոտորուած են ։

—Օգոստոս 10 ին պուլկար թերթերուն կը հեռագրեն որ Ստրումաի գետին հովտին մէջ ապստամբութիւնը յայտարարուած է. 8 ին Կրէսնա գիւղին քով արիւնահեղ ճակատամարտ մը տեղի ունեցեր է ։ Շատ մը Թուրք զօրքեր երկու թնդանօթով Ճումաէն դէպի ապստամբներու վայրը գացեր են ։

Առհասարակ ապստամբութիւնը հետզհետէ մեծ ծաւալ կընդունի ։ Թուրքերը սկսած են իրենց վրէժը լուծել խաղաղ մնացած պուլկար բնակչութենէն ։

ԱՆԳԼԻԱ

Լորտ Սոլիզպիւրին վախճաներ է ։ Սոլիզպիւրի Անգլիոյ նշանաւոր դիւանագէտներէն մէկն էր և ազնուապետականներուն պարագլուխը ։

—Անգլիական քանի մը համալսարաններու 14 հռչակաւոր ուսուցչապետներ թերթերուն մէջ խիստ քննադատական յօդուածներ հրատարակեր են Լորտ Չէմպըրլէնի մաքսային քաղաքականութեան մասին ։

—o—

ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

——

Տէր եւ Տիկին Գայաեան կընդունին թոշակաւոր հայ պատանիներ, կուտան անոնց հայկականին հետ Զուիցերիական առողջ դաստիարակութիւն, կը պատրաստեն զանոնք իրենց տարիքին եւ ընդունակութեան յարմար դասընթացքներու քաղաքիս վարժարաններուն մէջ, կապահովեն ընտանեկան խնամք եւ գոհացուցիչ յաջողութիւն ։
Մանրամասնութեանց համար անյապաղ դիմել առ

Յ. Գայաեան
47 Թաննէրսբրաս
Պալ (Սուիզ)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

——

Լօզան, Զուիցերիա

Երկրորդ տարի

Բ. տարեշրջանի դասախօսութիւնները կսկսին Սեպտ 1/14ին

Արեւելեան կամ հայկական կրթատունը կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ ։ Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս «առանց ո և է վճարումի», հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւայլն ։ Ընտանեկան կեանք ։

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրածանօթ դպրոցներէն ։

Կրթատան տարեթոշակը, հակառակ ընծայուած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, «անօրինակ» կերպով աժան է ։

Կրթատան յայտագիրն ամէն ուզողի կը ղրկուի ։

ՏՆՕՐԷՆ
Մ. Նալպանտեան

Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ

Հասցէ՝
Լօնժրկ 1.
Լօզան. —Սուիս

ՄԱԶԻ ՆԵՐԿ

——

ՀՐԱՇԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Դիմել Պ. Ա. Զարպհանէճեանի
Վառնա Պուլկարիա)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность" Варна